№ 48 — 1877 ՇԱԲԱԹ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ — № 48

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՌՁԱՐԱԲՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻԶՈՑ ՏԱԹԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ:
Յայտարարութիւններ ընդունվում են յայերէն եւ օտար լեզուներով.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ռ.
Ծանուցմունքները վճարվում են ուղղակի Ве редак. газеты „Пчела Армении“.

Խմբագրութիւնս խնդրում է ներկայ 1877 ամի ապառիկ մնացած բաժանորդագիրները հասցնել նրան:

Առաջիկայ 1878 թուականին

ՄԵՂՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐՔ

կը հրատարակվի

ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ՓՈՔՐԱՑՄԱՆԱՑՈՎ Ե ԴԻՐՔՈՎ ԻՆՉՊԷՍ ՄԻՆՉԵՒ ՅԱՋԻՄ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 6 ՌՈՒԲԼԻ

Թիֆլիսում ստորագրվել ցանկացողք կարող են դիմել. 1) ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ, որ գտանվում է Ս. Վարդանեանի տանը, հեռագրական կայարանին կից. 2) պ. Զաքարիա Գրիգորեանցի ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Միխայիլովսկի կամուրջի մօտ պ. Զուբալովի տանը, Լոնդոն հիւրանոցի տակ. 3) պ. Համբ. Ենգիճեանցի ԾԽԱԽՈՑԻ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ, Դվորցովոյի փողոցի վերայ, Գեներալ Ազիբունու զավէրեում եւ Միխայիլովսկի կամուրջի մօտ Վորոնցովի արծանի հանդէպը:

ՈՐԲ Ա. ՍԱԼԱՆԸ

ՔՆՈՒԻ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԵՌՆԻԼԸ

(Շար. եւ վերջ)

Է. ՆԵՐՔԻՆ ԶԱՅՆ.

Ես անմեղ հրեշտակը, ես լուսեղէն արարածը իր սուգը իր ատամն էր քաշել ու Աստծուն աղօթք անում վազդ վազդ թէ մի խաբար դալիս էր իր Աղանից, եանրա երգերի ձայնը անկաշկանդ էր ընկնում, մխիթարվում էր, սիրտ էր առնում ու կորիչ էր դառնում:

Պառաւ տատին տեսնում էր, որ սիրական Մարգարիտը օրէ ցօր մայրւում ու դեղնում էր, ամա բուն պատճառը չէր հասկանում ու ինքն էլ նրա հետ տանջվում էր: Գիշերը խեղճ պառաւը Մարգարիտի գլխավերևը նստած հեքեաթներ էր ասում. որ քնի ու հենց որ նա աչքերը խփում էր, պառաւը խաչակնքում էր նրան, «Հայրմեր» ասում ու նրա ոտքերի տակին պարկում: Ցերեկը Մարգարիտը Ալանի յիշատակներով էր մխիթարվում: գիշերը նրա պատկերը երազում տեսնում: վազդ վազդ վերջնում էր Ալանի գիրքը, նրա կարդացած տեղրանքը կարդում, յետոյ դոյին կպցնում ու լաց ըլում. եա էն սուրբ Աւետարանի առաջ չոգած իր նշանդրէքի օրվա ազօթքն էր ասում ու գիրքը համբուրում: Հերիք չէին խնդճին իրա ցաւերն Ցէրտերն էլ մի կողմից էր նրան թրախորով անում իր գառը խօսքերով: Հենց որ տեսաւ, որ խաթրով բանը գլուխ գալու չէ, Ցէր Հայրը կարական ասաւ որ, կիրակի Արչակը, Յովսէփ աղի աղէն, պտի գայ նչան դնելու:

Է՛հ, սիրելի կարդացող, երկար չեմ պատմիլ քեզ, թէ ինչ էր դառել Մարգարիտի սիրտը, մարդի խօսքերն ինչ են, որ նրա ներքին սուգը, նրա լեարդն ու թոքի խոցը, նրա հոգու ցաւն ու կսկիծը կարենան յայտնել: կարճ ասեմ, որ Մարգարիտը, աւետարանի առաջ չոգած, վճռեց զոհ դառնալ իր սիրոյ. թէ մինչի կիրակի Ալանից խաբար չգայ:

Ախ հազար անգամ բազդաւոր է էն մարդը, որ մի ընկեր կունենայ ու իրան ցաւերը նրան կյայտնի, իր սիրտը նրա դեմ բաց կանի: Էսենց վազդ կասես մարդուս ցաւերն պակասում են, կիսվում: խեղճ Մարգարիտը ով ունէր, որ նրա դարդը փարատէր, ծեր տատը չէր հասկանում նրա խօսքերը, էս սէրը նրա համար նոր բան էր:...Մարգարիտը մենակ էր, Ալանի նամակներն էլին նրա ընկերները, նրանցով էր քիչ ու չաս իր սրտի կրակին հով տալի: Սիրականների խաբար տանող բերողը Բուդաղն էր, էն բարի տլէն, որ իր կեանքը ընկերի համար չէր խնայում:

— Ալան, ասում էր նա ամեն օր իր ընկերին, ինչ ա մտքդ, ախար ինչ պտի անես դու, էն խեղճի յոյսը քեզ վրայ է: դու էլ ըոկի մի բան չես տեսնում. ախար մեզք է:

Ա՛խ, թէ ես քո տեղակ ըլնէի, Աստուած վկայ, մի սամթ նրան էլ տան մէջ թողացողը չէի:

— Դրուստ ես Բուդաղ Ջան, դրուստ: իմ տունն էն օրը քանդվեց, որ իմ հէրը մեռաւ, իմ ոսը կոտրվեր, ես էդ տունը չմանէի, իմ աչքերը քոռանային, ես էն աչկան չտեսնէի. Ա՛խ, ինչ կընէր ուր տարեկան մեռնէի, որ էդ հրեշտակին էսենց չտանջվէի, էսենց չմաշէի: Ինչ անեմ, Բուդաղ Ջան, ես էս օր էլ կփախցնեմ նրան, ամա գիտես, ինչ կայ—ճանապարհ ես Յովսէփ աղին, գիտես, որ ես ուղենայ, էս սամթը սաղ քաղաքը տակնուվրայ կանի: Ղազաղ թուրքերը նրա ձեռին են, ես վախում եմ մի փորձանք չբերի մեր գլխին էդ անիծածը... Ախ, սիրտս կրակվում է, ձեռիս չարա չկայ:

— Տօ թուրքերից ես վախում: Բա մեր փաշիան գետինն է մտել, մեր Թեները թուլացել են, թէ մեր Թիերը գուլացել, որ մենք թուրքերից վախենք, որ նրանք մեր գլխին օյին հաստեն, որ Մարգարիտին մեր ձեռից իլնեն:

— Իմ գլխին օյին բերողը հլա իր մօր փորից դուս չէ եկել: Մարգարիտի մաղին դիպչողի գլուխը կթռնի, նրա չոռ աստղի տուն ու տեղը կչնջվի, ամա էս քանի վազդ ա մի ձէն ա ընկնում անկաթ, — թէ դու քո մուրազին հասնողը չես, թէ Մարգարիտին մի ջնտա պիտի դիպչի: Էս ներքին ձէնը կապում է ձեռներս, ասաւ Աղանը ու նրա անվախ երեսը կնճռվէց:

Ինչ կընի, որ մարդ վազդ վազդ էս ձէնին անկաթ դնի: Քանի քանի էսենց ձէներ լսվիլ են ու կատարվել. էս բնութեան ձէնն է:

Ը. ՁՈՐՍ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Շաբաթ իրիկուն էր. Երևանայ երիվնքը կատաղել էր, կասես փարղէն պատռվել էր սաղ ծովը Երևանայ գլխին էր թափում: Կայծակներն էլ վերջ չկար, եա քարի էր խփում ու միյից կես անում, եա ծառի ու սնացնում: Էսենց գիշեր քիչ կպատահի Երևանում, դուման եկել ու աչխարհ կոտրել էր, ձիաւորը ձիան անկաթը չէր տեսնում. էսենց վազդ չանը տանից դուրս չէր գալ:

Երկու մարդ եափունջէքի մէջ փաթաթված խանդ բաղի մի նեղ փուչով անց էլին կենում:

— Շատ լաւ վազդ ենք գնում, Ալան Ջան, Ցէրտէրը հմի ցօսէփ աղինց տանը հարրած վերընկած է, Մարգարիտն էլ քեզ ա մըտնում, ասաւ նրանցից մէկը ու չուռ տվից մի նեղ փուչ:

— Անջաղ հասանք տօ, ասաւ էլի էն մարդը, որը մեր Ալանի ընկեր Բուդաղն էր — ըրտից գէլերը չան նման խաղում են, Աստուած վկայ, տօ, կաց մի տեսնեմ Ցէր Պապէն էկել ա թէ չէ, ու պատուհանը կամաց թըխթըխկացրեյ:

— Էն ով ա, լսվեց ներսից:

— Ցատի Ջան ես եմ ես, քուչ հոգուն մեռնիմ. ասաւ ուրախ ձէնով Բուդաղը, մի բաց արա է, օղոդիացնք ախար է:

Պատուհանը բացվեց ու Մարգարիտի գլուխը դուս եկաւ.

— Սիպէր Բուդաղ դու ես, սեռնակ ես, բա Ալանն որ ա:

— Էտ տեղ եմ, էս տեղ, խօ չեմ մեռել, ասաւ Ալանը ու վազ տվեց գէպի դուռը, որ տատը բաց էր անում:

— Մարգարիտ Ջան, ես եկել եմ քեզ տանեմ, ասաւ Ալանը գրկելով ու համբուրելով իր սիրականին: Աչքն բան պաարաստել եմ. ձիանքը բերդում կանգնած են: Մենք կփախնինք վազարչապատ ու էնտեղ կպսակվինք: Հերիք ա ինչ տանջվեցիր, էսենց խօսքերով ուզում էր խեղճ, տրորված Մարգարիտի սիրտը չհի, ամա էլի էն անիծված ձէնը ասում էր. «դու էդ բաղդին հասնելու չես»: Հենց նստեցին թէ չէ, ամպերը գոռացին ու կայծակը խփեց: Ամենը խաչակնքվեցին:

— Աստուած Ջան, էս ինչ փիս գիշեր ա, գոռաց Մարգարիտը կասես աչխարհի վերջն ըլնի: Աստուած էլ ա բարկացել մեզ վրայ:

— Էս օր, Մարգարիտ Ջան, երեսի ա չես կարայ գալ, մնում ա էգուց: Իրիկուն ես Բուդաղին կղրկեմ քեզ մօտ, նա քեզ կհասցնի Սագիթլը, էնտեղից մի տեղ ճամբա կըընդնինք:

Մի սահաչանք իրար կողքի նստած էս չորս զարեկամները հին ու նոր բաների վրայ են խօսում: Ամեն մէկը իր գլխի եկածներն էր պատմում. իր սրտի ցաւերն ասում:

— Ալան, մտդ ա, ասաւ Մարգարիտը, ինչ զաչաղների ձեռից ինձ ազատեցիր: Ա՛խ, էն ինչ սհաթ էր, որ Թևերիդ վրայ աչքերս բացեցի ու լուսեղէն էրեսդ տեսայ: Էս երեսը ամեն գիշեր երազումս առաջս է գալի. էն օրից իմ սէրը փոխվից — նրանից առաջ քեզ ախտըր նման էի սիրում...

— Մարգարիտ, դու չէիր ուզի, որ էն օրը իմ ժեռած Ջանդակը տեսնէիր էն երեսի տեղ, որ էդ անիծված սէրը քո անմեղ սիրտը չընկնէր ու էանց չմաչէր, հարցրեց մի խոր տրխուր ձէնով Ալանը:

— Ա՛խ, չէ, մի ասիլ անիծուած: ես էրնեկ եմ տալիս էն օրվան, որ առաջի անգամ քեզ ախոր տեղ, Ալան Ջան ասեցի, էն դարդը որ սէրի հետ մեր սիրան ընկաւ, էն ցաւը, որ մեզ մաչում ա հիմի. էն ցաւը ինձ համար բազդ ա. վազդ վազդ մտքի հետ ընկած ուրիշներին մտիկ եմ տալի ու ինձ ու ինձ միտք եմ անում. գինչ ա էս խեղճերի կեանքը, որ սէրը չեն հասկանում, որ նրա համար չեն տանջվում ու անասունի պէս ծնվում են ու մեռնում:

— Մարգարիտ, էդ ինչ խօսքերով ես իմ եարալու սիրտը դինջացնում. իմ ցաւը դուս էիր: «Մարգարիտը փչմանած կընի, որ ինձ սիրեց» ասում եմ ու անիծում ինձ, անիծում իմ հօրը, որ ինձ աչխարհ գցեց:

— Ալան, ես բազդաւոր եմ, որ տանջվում եմ. դու էլ ինձ հետ տանջվում ես: Մենք մի ցաւով պիտի մեռնինք, էլ մեզ ինչ ա հարկաւոր, ասաւ Մարգարիտը ու լաց էլաւ:

Մի լայ եղիր տրնչտակ, մի լայ, ասաւ ծեր տատը ու զրկից իր սիրական զաւակին:

— Թող, տատի Ջան, թող, ես ուրախ եմ ներսասունք են, թող թափին նրանք:

— Դէ, գնացէք, որդի. դարձաւ տատը տղերքին, թողէք մի քիչ դինջանա Մարգարիտը:

Էս բոպէին մի ոտի ձէն եկաւ:

— Վայ գլխիս, տէրտէրն ա, ասաւ սարսափած ձէնով Մարգարիտը:

— Քու տունը ծակվի, էլ ինչ ես կաղնել, ասաւ Բուդաղը ու ուղից Ալանին դուս քաշի:

— Մնաս բարով, Մարգարիտ Ջան, էգուց Սոգիթլղում կսպասեմ ձեզ, աւելացրից Ալանն ու գլխ ալս մնկ էլ պատուհանից իր ընկերի հետ դուրս թռաւ բաղչէն:

Ընկի չես խօսայ, որ լաւ տրկ անցանք, ասաւ Բուդաղը, հենց որ ընկերները բաղչի պատից վեր եկան քուչէն:

ՀԱՅԵՐԵՆ ԼՐԱԳՐԻ

Ամսագիր ընդհանրական գիտության, գրականության և քաղաքականության

Հրատարակվում է Վաղարշապատում ամեն շաբաթ մի անգամ

Գնում է տարեկան 10 ռուբլի, կիսամյա 5 ռուբլի, երեք ամսվա 2 ռուբլի 50 կոպեկ

Առանձին համարը 20 կոպեկ

Գրվում է Էջմիածնի տպարանում

Խմբագիր՝ Գ. Տեր-Մովսիսյան

Տպագրվում է Սինոդի տպագրական գործերի կոմիտեի թույլտվությամբ

Ամսագրի բաժանորդագինը ուղարկվում է Էջմիածին

Ամսագրի բաժանորդագինը և հայտարարությունների համար վճարումը ընդունվում է Էջմիածնի տպարանում

Հայտարարությունների համար վճարումը 1 տողի համար 5 կոպեկ

Ամսագրի բաժանորդագինը և հայտարարությունների համար վճարումը ընդունվում է Էջմիածնի տպարանում

ՀԱՅԵՐԵՆ ԼՐԱԳՐԻ

Ամսագիր ընդհանրական գիտության, գրականության և քաղաքականության

Հրատարակվում է Վաղարշապատում ամեն շաբաթ մի անգամ

Գնում է տարեկան 10 ռուբլի, կիսամյա 5 ռուբլի, երեք ամսվա 2 ռուբլի 50 կոպեկ

Առանձին համարը 20 կոպեկ

Գրվում է Էջմիածնի տպարանում

Խմբագիր՝ Գ. Տեր-Մովսիսյան

Տպագրվում է Սինոդի տպագրական գործերի կոմիտեի թույլտվությամբ

Ամսագրի բաժանորդագինը ուղարկվում է Էջմիածին

Ամսագրի բաժանորդագինը և հայտարարությունների համար վճարումը ընդունվում է Էջմիածնի տպարանում

Հայտարարությունների համար վճարումը 1 տողի համար 5 կոպեկ

Ամսագրի բաժանորդագինը և հայտարարությունների համար վճարումը ընդունվում է Էջմիածնի տպարանում

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ

ՎԱՍՆ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏՈՅ

Ի ՍԿԶԲԱՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի. ՊՈՒՐՆՈՒԶԻ ՀԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ի. Պուրնուզի հարցականութիւնը ամենէն աւելի ուշագրաւ է այն տեսակէտով, որ ան ներկայացուցիչն է այն տարրերուն, որոնք կը կազմեն Ֆրանսայի ներկայ կառավարութեան հիմնական ուժը։ Ան ներկայացուցիչն է այն մեծ ազգային կուսակցութեան, որ Ֆրանսայի ներկայ կառավարութեան ստեղծումին մեծ մասնակցութիւն բերաւ։ Ան ներկայացուցիչն է այն կուսակցութեան, որ Ֆրանսայի ներկայ կառավարութեան ստեղծումին մեծ մասնակցութիւն բերաւ։ Ան ներկայացուցիչն է այն կուսակցութեան, որ Ֆրանսայի ներկայ կառավարութեան ստեղծումին մեծ մասնակցութիւն բերաւ։

Ի. Պուրնուզ ներկայացուցիչն է այն

որ ստացաւ մօտ 3 հազար օգնական զօրք։ Պատերազմը շարունակվեցաւ առաւօտից մինչև վերջնալոյսը և բոլոր Տաճիկ յարձակումները յետ մղվեցան, բայց որովհետև Տաճիկները մեացին գիշերը այն բարձրութեանց վերայ, որոնք իշխում էին Ուրասաց Ջելալէէնի և Ռիլեսի դերութեանց թևերի վերայ, ուստի և Ռուսները թողին այս դիրքերը։ Ռուսաց կորուստն անյայտ է, միայն աննշան։ Ռուսաց մեացած զօրաբաժինները բռնած ունին իրանց նախկին դրութիւնքն Ազրաքոնակի հանդէպը։

Տաճիկները շարունակում են ամրացնել իրանց դիրքը և կամաց կամաց ստանում են օգնութիւն Սոֆիայից։ Այսօր 2-ին Տաճիկները դուրս գնացին Ենէնայից, բայց նախապէս այրեցին Թշուառ քաղաքը. Ռուսաց առաջապահ զօրքերը առաջ գընացին և մտան քաղաքը։

«St. Petersbourger Zeitung» լրագրին վիննայից հաղորդում են հետևեալ զարմանալի լուրը. «Բիկոնսֆիլդի կառավարութիւնը նոր խաղ խաղաց, նման Սուէզի ջրանցքի բաժանորդագրերի գնելուն։ Նա գնեց Տաճկաստանից նորա բոլոր պատերազմական նաւատորմիղը։ Մենք միայն մի քանի անհարութիւնք կարող ենք անել այն մասին, թէ ինչ սակից նրան այս չլսված ձեռնարկութիւնն անելու։ Այս առուտուրի նախագիծը նոր չէ։ Տաճկական նաւատորմիղի անդործունէութիւնն և Անգլիացի Հոբբարտ փաշայի հոգացողութիւնը պահպանելու այդ նաւատորմիղը ամեն վտանգներից, որ գարմացնում էր ամենքին, անշուշտ կապ ունէին այդ նախագծի հետ, որին աւելի մեծ նոր գարկ տուեց լուրը, թէ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի պահանջելու Տաճկական նաւատորմիղը փոխարէն պատերազմական ծախուց։ Պէտք է խոստովանել, որ հենց այս վերջին հանգամանքով միայն կարելի է բացատրել այդ գարմանալի վաճառութիւնն կարելի է երևակայել, թէ Լոնդոնում ինչ սարսափ սիրտ Տորիներին, երբ լսեցին, որ Ռուսաստանը պատրաստվում է մի հարուածով բանալու իւր համար Դարդանելի նեղուցն և ձեռք բերելու մի նշանաւոր նաւատորմիղ, որ ընդունակ է հանդէս գալու մինչև անգամ անգղիական նաւատորմիղի դէմ, մանաւանդ երբ նա կգտնվի այնպիսի քաջ նաւաստիների ձեռքում, որպիսիք են Ռուս նաւաստիք, որոնք անհնար փոքրիկ նաւակներով յաղթել են հսկայական զրահակիր նաւերին, որոնց առաջևը նոցա նաւակները ինչպէս կաղնի կճէպներ էին։ Պարզ է, որ Տօրինները չեն ցանկանում այսպիսի մի իրողութեան կատարման։*

Ի դէպ է նկատել, որ այս ձեռնարկութիւնը, եթէ միայն ուղիղ է հաղորդված լուրը, նախապատրաստեցին իրանք Ռուսները, շտապելով հրատարակել խաղաղութեան ապագայ այս պայմանը։ Ռուսաց լրագիրները կարող են արդարանալ նրանով, որ միայն Դիզրայէլիի գլխում կարող էր ծնանիլ այդպիսի չլսված առուտուր։ Իսկ ինչ կվերաբերի Տաճկաստանին, սա կարող էր այդպիսի ձեռնարկութեան համաձայնիլ իւր դրամական ծանր հանգամանքների պատճառով։

Neue Freie Presse լրագրում հրատարակած էր Միդհատ փաշայի հետևեալ նամակն, որ ուղղած էր 7-ին (19) նոյեմբերի մի այլ փաշայի կ. Պօլսում.

«Անցնող տարուայ իրողութիւնքը քննելով մենք տեսնում ենք, որ կայսերական կառավարութիւնը (Բարձրագոյն Դուռը) երեք փառաւոր յաղթութիւնք ածել է։

«Առաջին յաղթութիւնն է դեսպանաժողովի արձակումն, որոյ առաջարկութիւնքըն հիմնված էին շատ սխալ սկզբունքների վերայ և նպատակ ունէին միանգամայն քանդել Օսմանեան պետութիւնը և այն առանց պատերազմի։ Մեր (Տաճիկ) կառավարութիւնը ցոյց տուեց հաստատամտութիւն և մերժեց այդ առաջարկութիւնները. դեսպանաժողովը ցրուեցաւ չը հասնելով ոչ մի հետևանքի. սորա եզրակացութիւնն էր Լոնդոնի արձանագրութեան հրատարակութիւնը։ Իմ կարծիքով այս վկայագրի մէջ չկար ոչինչ այնպիսի, որ վտանգի ենթարկէր Օսմանեան պետութեան ամբողջութիւնն և կազմուածքը։ Այն ժամանակ կարելի էր մեղմել մի քանի նախադասութիւնքն, որ վիրաւորիչ էին մեր արժանաւորութեան և նրանց չնչել արձանագրութեան միջից։ Բայց սորա վերայ բնաւ ուշք չդարձնելով մեր կառավարութիւնը մերժեց արձանագրութիւնը թէ հանամտութեամբ, մեծամտութեամբ և յանդգնութեամբ, որ իրան չէր վերիլ և մինչև անգամ մի հեղինակութիւն ունեցող կառավարութիւն, և մի անզգուշութիւն զօրութիւն։

«Արձանագրութեան ընդունելութիւնը կ՚ետաձգէր պատերազմն և Տաճկաստանը ժամանակ կվաստակէր։

«Այսպիսի անխոհեմութեամբ մենք կորցրինք մեր յաղթութեան հետևանքները։ Մենք տարանք երկրորդ յաղթութիւնը հրատարակելով սահմանադրութիւն։ Օչ ոք չէ կարող ժխտել, որ մեր կայսերութեան ողջալի վիճակի գլխաւոր պատճառ կայանում է մեր վարչութեան սխալ և վատթար ձևի մէջ։ Ինչպէս և իցէ կայսերութիւնը այդ ձևով գոյութիւն ունենալու և հասաւ մեծութեան. բայց այսուհետև նա չէ կարող շարունակել իւր գոյութիւնը, առանց նոր ճանապարհ վերայ ոտք դնելու և առանց կանգնելու եւրոպայի քաղաքակրթեալ ազգութեանց հետ մի աստիճանի վերայ։

«Փորձը ապացուցից մեզ այս փոփոխութեան անհրաժեշտութիւնը. յեղափոխութիւններն և բարեկարգութիւնները, որոնք պահանջում էր Եւրոպան ոչ այլ ինչ են բայց եթէ հին եղանակի ջնջուածն։

«Յեղափոխութեան մի քանի արդէն տեղ ունեցած փորձերն բաւական հանդիսատացրին Եւրոպան։ Գժբաղդաբար նրանից չեն անկարգութիւնքն, որոնք պատեղ են պատերազմի և մի քանի անձանց անբաւականութեան, որոնց գործունէութեանը ուղղակես ընդդէմ է սահմանադրութիւնն, առաջացրին այն շատ բազմատեսակ իրողութիւնքն, որ ամենքին իրաւունք տուին սահմանադրութեան հաստատութեան մասին տարակուսանք և կասկած յայտնել։ Օրէնքներն, որ ընդունել և հաստատել էր պատգամաւորաց ժողովը, չէին կատարվում, նշանաւոր յանցաւորները ներողութիւն էին գտնում և ապատ մնում օրինաց խստութիւնից, մինչդեռ անմեղները ենթարկվում էին մահու պատժի։

«Մի խօսքով կարծիք է կազմվել թէ Բարձրագոյն Դուռը կամենում է ջնջել սահմանադրութիւնն և Տաճկաստանն ընդունակ չէ ներփոխութեանց համար։ Այս հանգամանքներն աչքի առաջ ունենալով գարմանալի չէ, որ մենք (Տաճիկներս) հանդիպում ենք եւրոպայում թշնամական, անտարբեր և անվստահ կարծիքների։ Այսպէս մեր երկրորդ յաղթութիւնը ոչընչացաւ և տաճկական սահմանադրութիւնը երրորդ անգամ երևեցաւ փառաւոր Հատտի—Հումայիւնի մեռեալ տառը։

Երրորդ յաղթութիւնն, որ ես յիշեցի, էր մեր քաջ զօրքերի յաղթութիւնը։

Բայց հակիւ այս յաջողութիւնը գլուխ եկել էր կամ մօտ էր ժամանակը հաստնելու այս յաջողութեան, շնորհիւ ազգի քաջութեան և դիւցազնութեան— և ահա նոր սխալներն ոչընչացրին այնքան զոհերի պատուղները։

Ջանազան ազգերի պատմութիւնները ցոյց են տալիս, որ այսպիսի թշուառութիւնք կրկնվել են յաճախ. միայն հենց այսպիսի րոպէներին ազգը պէտք է ցոյց տայ իւր առաքինութեան բոլոր զօրութիւնը, չլքանելով ոգւով և չյուսահատվելով և առանց տատանման պատերազմելով բոլոր խոչընդոտների դէմ։ Անտարակոյս մարդուս բնաձին է այսպիսի հանգամանքներում թլանալ և ականջ դնել խորհուրդներին, որոնք քարոզում են խաղաղութիւն։ Բայց եթէ մարդիկ գժբաղդ են գտանվում լսելու այսպիսի խորհուրդներին, ընկնում են անդունդքը, որոյ խորութիւնը չափվում է շատ ուշ և որից մարդուն այլ ևս ոչինչ չէ կարողանում ազատել։

Բոլոր ազգերն, որոնք անդառնալի կորսով կորան, գոհ եղան կամ այսպիսի թշուառութեան և կամ ներքին երկպառակութեանց։ Թող իմ խօսքերս գրաւեն թէ մահմեդականների և թէ քրիստոնեաների ուշադրութիւնը և թող նոքա կշռեն ապագայի վտանգները. Թող նոքա միանան հայրենիքիս փրկութեան համար։ Կայ փրկութեան միջոց— սորա վերայ մտածողը է լինում մեզ մարդկային առողջ միքը — և նորանով կարող ենք մենք ձեռք ձեռքի տուած երթալ առաջ դէպի կատարելագործութիւն և հասարակաց բարօրութիւն։ Այժն տարաձայնութիւն, ասէն մոռացումն անցեալի կառավարողն մեզ դէպի կորուստ և առ այն, որ մենք ոտնակոխ կլինինք մեր թշնամիներից։

Մ ի գ հ ա տ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Եկատերինոդարի Հայ դպրոցն իւր մօտ ունի գրագարան, ուր կարելի է տարեկան 7 ո. վճարով ստանալ ընթերցանելի գրքեր, լրագիրներ ու օրագիրներ հայերէն, ռուսերէն և օտար լեզուներով։ Այս գրադարանում ծախվում են և մանկավարժական և ուսումնական ձեռնարկներ ու ուսման վերաբերեալ այլ պիտոյքներ, նոյնպէս ընդունվում են վաճառման համար կոմիսիայով գրքեր։

Գրադարանը ստանում է 18 ռուսերէն լրագիրներ և օրագիրներ, երեք Հայերէն, երեք Ֆրանսերէն և մի գերմաներէն։

—

Հին Խրիմից մեզ գրում են, որ այնտեղի հասարակութեան ընտիր անդամներից մէկը մեծ. Աղեքսանդր Ֆեոդորովիչ փայտուն անցեալ հոկտեմբերի 11-ին կորցրել է իւր միակ լինամեայ որդուն և սորա յիշատակին անմահացնելու համար, այդ հայաբնակ փոքրիկ քաղաքի դպրոցին նուիրել է նշանաւոր գումար, որ սորա տոկոսներով հոգացվին աղքատիկ աշակերտների ուսումնական պիտոյքը։ Ցուղարկաւորութեան հանդիսին ներկայ է եղել գրեթէ քաղաքի ողջ հայ հասարակութիւնն և երկսեռ հայ դպրոցի ուսուցիչ մեծ. պ. Սուքիասեանը կարդացել է հանգուցեալ մանկան վերայ յարմար ապրումնական։

—

Խմպրութիւնս չնորհակալութեամբ ստացաւ մեծ. պ. Կ. Կոստանեանցից նորա երկասիրութիւնը «Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց», որ բաղկացած է երկը գրքից, որոց իւրաքանչիւրը բաղկացած է աւելի քան 200 երեսից։ Այս երկասիրութիւնը տպած է մեծ. պ. Մ. Ս. Սանասարեանցի ծախիք վենետուում։ Տիպն ու թուղթը չատ մաքուր են և ընտիր։ Բովանդակութիւնն Առաջին գրքի է Հայոց պատմութիւնը Արշակունեանց հարբատութեան անկումից մինչև վահան Մամիկոնեանի մարզպանութիւնը, գրաբար, Հայ մատենագիրների գրուածքներից հիւսած, երկրորդինը նոյնը աշխարհաբար. իսկ երրորդ գիրքը բովանդակում է իւր մէջ յառաջաբան, ծանոթութիւնք, ժամանակագրութիւն և պատմական հատուածներ առաջին մասի համար։

—

Բաղուից «Մարդասիրական ընկերութեան խորհրդոյ անդամները հաղորդում են, որ մեծ. Ա. Ս. Ղորղանեանցը Բագու գտանվելով ըստ իւր բնատուր բարեսպատական և առատաձեռն բնաւորութեան նուիրել է Բարեգործական ընկերութեան երեք հարիւր ռուբլի արծ. և յայտնում են Նորին մեծապատուութեան իրանց չնորհակալութիւնը։

—

Գաղիկ ասացեալ հիւանդութիւնը վաղուց յայտնի է. բայց մինչև այժմ այդ հիւանդութեան յատկութիւնը, նորա առաջացնող պատճառը և միջոցները նորա առաջն առնելու անհայտանալի են, մշակած չեն գիտնականապէս, վերջին անգամ գիտական կոլբի հայեացքը դորա մասին հետաքրքիր համարելով, աւելորդ չէր լինիլ նորա մտքերի հետ ծանօթացնելու մեր ընթերցողներին, նա դուրս է բերում որ՝

1) մեծ մասամբ ծաղկի պատուաստելը և կրկնապատուաստելը չէ պաշտպանում մարդուն ծաղկի թոյնից և կարող է առաջացնել այդ հիւանդութիւնը մեծ, վտանգաւոր ձևով, 2) պատուաստութիւն կարող է զարթեցնել այն հիւանդութիւնն, որն, այսպէս ասենք, ծածուկ կերպիւ գտնվում էր կազմուածքի մէջ և տալ հարուած հետևաբար նորա զարգանալուն, 3) Անկասկած է, որ պատուաստութիւն առաջացնում է մեծ հիւանդութիւն, որ մեծ մասամբ հարուած է տալիս երեխայոց, որովհետև նոցա փափուկ կազմուածքը չատ փոքր արգելք կարող են դնել հիւանդութեան ազդեցութեան։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՋԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1878 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ ШЕСТОЙ

Въ 1878 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1878 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки . . .	10 р.	5 р. 50 к.
» » съ доставкой . . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи . . .	12 »	6 »
За границу по почтовому союзу .	15 »	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ, въ редакцію *Тифлисскаго Вѣстника*.

ԱՐԴԷՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՏՐՓԵՐԳ **ՕՐԱՑՈՅՑ** ԹՎԱԿԱՆ

1878 թ.

Հանդերձ ԳՈՒՇԱԿՈՒԹԵԱՄԲԻՔ ՕԴՈՑ ըստ Բրիւսէլ և Լֆէմբերթի ՍԿԶԲՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ՏՊԱԳՐԱԾ ՊԱՏՏԵՐ՝

Վերոյիշեալ առաքեալն Հայաստանեայց

ՍՈՒՐԲՆ ԵՐԵՄԻԱ ՂԻՄԻՏՈՍ

և եկեղեցական երգիցուհեամբք սկսեալ աւետեաց օրուայ, Օրհ. Հրգ. Մկ. Մեծ. և Համբ. Հանդերձ քառաց, Ռուսաց և Լատինացւոց տօներով։

Վերջումը «ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ» յաւելուածով հետևեալ բովանդակութեամբք

Ա. Քարոզիչ առաքեալն Հայաստանեայց սուրբն Բարդուղիմէոս
Բ. Տեառընպառաջ
Գ. Գալուստ և փոխադրութիւն նշխարացն Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի
Դ. Հայ երկրագործն
Ե. Երկու մօրից ծնուած
Զ. Աղնիւ սիրահարութիւն կամ ուղիղ կշիռ
Է. Ջերմախտութեան չէ րմ—ա ե ն դ բժշկութեան հնարքը
Ը. Դարձեալ ջերմախտութեանց բժշկութեան հնարքը մի այլ կերպ
Թ. Գլխի մազերը մաքրացնելու, թափը հանելու և չափազանց փափկացնելու գիւղը
Ժ. Մի քանի երկարակեաց մարդիկ
ԺԱ. Չաւատարմութեան ազնուութիւնը կորցնել
ԺԲ. Չանելուկ և 1877 թ. հանելուկի բացատրութիւնքը
ԺԳ. Մատենագրութիւն։ փարոս խմբագիր բանասիրական, Մսերեանց 1872, 73, 74, 75 և 76
ԺԴ. Պատասխան և հերքումն Ագուլեսից գրած իբր քննողական նամակին որ տպուած է «Մշակի» 19 Համարում 1877 թ. վերջին երեսում
ԺԵ. Քննութիւնք 1877 թ. Հայոց օրացոյցների՝ ԷՄՄԻԱՆԱԿԱՆ, ՏԵՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆի, Ա. ԷՆՖԻԱՋԵԱՆՑԻ և ԱՂՈՒՆԱԿԵԱՆՑԻ
ԺԶ. Վրիպակ
ԺԷ. Զանազան լեզուներ

գիրքն է օրացոյցի ինչպէս անցեալ տարի տպուած է սակաւաթիւ, այն է՝ 1000 օրինակ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԷԿ

Կգտնուի միայն Երևանում, Բագուում, Ղզլարում, Եկատերինոդարում, Տփխուսում, Հին—Նախիջևանում և Փոթայիսում։

Խմբագիր և Հրատարակիչ Աբգար Ս. Գուլամիրեանց

Մնացեալ տեղերից ցանկացողք կարեն ստանալ փոստով հետևեալ հասցէիս կանխիկ գրամաւ։

Въ Эривань

Абгару Гуламирянцъ 1—(1)

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 10-го ДЕКАБРЯ 1877 г. Типографія А. Энфіаджіанцъ и К-о Տուն Բժշկապետ Մ. Ռօտինեան